

# ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՇԱՏ ԼՈՒՐՁ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ Է

*Posted on July 8, 2020 by Keghart*



Category: [Opinions](#)



## Յակոբ Անդրեասեան, Երուսաղէմ, 3 Յուլիս 2020

Չարմանալի երեւոյթ մը կը պարզուի Հայաստանի տարածքին Պսակածել վարակի այս ամիսներուն: Ուղղակի մեր ուղեղին մէջ չհամատեղուող յամառութիւն մը կը նկատենք, երբ մեր հայրենակիցներէն շատ շատեր զգուշաւորութեան փոխարէն կը ցուցադրեն տարօրինակ յամառութիւն մը, անբացատրելի ընդվզում մը, բարկաճայթ կեցուածք մը, կարծես իրենց ամենէն կենսական ունեցուածքը կը խլեն իրենցմէ:

Մինչ աշխարհի շատ երկիրներու մէջ ժողովրդային լայն զանգուածներ դիմակ կապելով եւ պաշտպանիչ ձեռնոցներ հագնելով մեծ ճիգ թափեցին կարելի եղածին չափ կասեցնել վարակին տարածումը, մեր հայրենիքին մէջ տակաւին կը շարունակուի տիրել տարօրինակ ապստամբութիւն մը, լրջօրէն չհաստատուած կասկածամտութիւն մը եւ չհիմնաւորուած «դաւադրական ծրագրի մը» հանդէպ հաւատք մը:

Երկու տարբեր հարցեր են վարակի ստեղծման-յառաջացման պատճառներն ու հեղինակները եւ անոր դէմ պաշտպանուելը, նախապատրաստուելն ու զգուշութեան դիմելը: Կրնանք կասկածներ ունենալ թէ սաինչ պետութիւնը, սաինչ բազմամիլիարդատերը եւ կամ նաինչ դեղագործական ընկերութիւնը ստեղծեցին, որպէսզի պլա-պլա-պլա...: Փաստը այն է որ կայ, կը տարածուի, ինչպէս ԱՄՆ-ի եւ մեր հայրենիքին մէջ ալ դժբախտաբար: Պատճառները ըստ մեր հաւաքած լուրերուն՝ ԱՄՆ-ի մէջ անժամանակ ցոյցերն էին (Black lives matter...) եւ այս առթիւ շատ շատերու անդիմակ մասնակցութիւնը, շուկաներուն եւ հասարակական վայրերու վաղաժամ վերաբացումը, վարչակազմի կողմէ վերէն վար ղրկուող երկդիմի եւ հակասական հրահանգները, իսկ մեր հայրենիքի պարագային նաեւ անհնազանդութիւնը, կարգ ու կանոնի չենթարկուելու հոգեբանութիւնը եւ այլ ազդակներ:

Շատ բարի, պահ մը ընդունիւնք թէ չես հաւատար թէ պսակածել վարակ մը կայ եւ ատիկա արեւստածին է ու շինծու եւ այլն, բայց ատիկա ՉԷ ՓԱՍՏՈՒՄԾ ցարդ: Սակայն փաստ է որ մեր հայրենիքին մէջ արագօրէն եւ վտանգաւոր մագլցումով կրկնապատկուեցաւ վարակուածներուն թիւը: Այս **մեկը** գոնէ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱՆՔ, թէեւ այս անգամ պիտի ըսեն թէ իբր «փող են տալիս» որ մահացողին համար յայտարարեն թէ «Կովիդ19»ի պատճառով մահացաւ, որպէսզի պլա-պլա-պլա...:

Խելամտութիւնը կը թելադրէ որ զգոյշ ըլլալը անելի օգտակար է, որովհետեւ վարակին գոյութեան նոյնիսկ եթէ 50% հնարաւորութիւն տանք, անելի ճիշդ չ'ըլլա՞ր պաշտպանուելու եւ զգուշաւորութեամբ ապրիլ մինչեւ վարակը սկսի մարիլ կամ պատուաստը գտնուի:

Հոս, Երուսաղէմի եւ Իսրայէլի մէջ, ուր կը գտնուին աշխարհի ամենէն յայտնի դեղագործական հաստատութիւնները, որոնք միլիարդներով եկամուտ կը բերեն երկրին, բաւական արդիւնաւետ բուժական համակարգ կայ (ճիշդ Եւրոպայի եւ ԱՄՆ-ի պէս), վերջերս վարակի յաջորդ ալիքը սկսաւ բարձրանալ, որովհետեւ շատ քաղաքացիներ չեն ընդունիր պաշտպանուելու հրահանգը, ինչպէս որ չեն ընդունիր

գանազան պատուաստումներ: Շատ մը հասարակական փոխադրութեան միջոցներ խճողուած են օրուան որոշ ժամերուն եւ դժբախտաբար բազմաթիւ քաղաքացիներ դիմակ չեն կրեր: Արդիւնքը այն կ'ըլլայ, որ գրեթէ մարող վարակը նորէն գլուխ կը բարձրացնէ եւ մեր գլխուն ալ փորձանք մը կ'ըլլայ...:

Գրեթէ նոյնն է մեր երկրի պարագան: Երբե՛ք արդարացուցիչ չեմ գտներ «Ես հաւատացած չեմ», «ոչինչ էլ չկայ», «սաղ շինծու բան ա...», «ես ազատ եմ, կ'ուզենամ կը դնեմ, չեմ ուզի, չեմ դնի» եւ նման եսակեդրոն արտայայտութիւնները: Ասիկա կը նմանի այն պարագային, երբ թշնամիին ռմբակոծիչ օդանաւերը վերէն ռումբեր կը տեղացնեն քաղաքին վրայ եւ սակայն մարդիկ կը գտնուին եւ կ'ըսեն. «Աստուած մեծ է, Ան կը ինայէ իր գաւակները...»:

Հայաստանցի իւրաքանչիւր քաղաքացի ՊԱՐՏԱԻՈՐ է ենթարկուիլ ամբողջ Հայաստանին վերաբերող վարակի կանխարգելման նպատակով տրուած հրահանգները: Այլապէս չենթարկուիլը կը դառնայ անհնազանդութիւն, անիմաստ յամառութիւն, անձնական քմահաճոյք:

Վերջերս նախանձս շարժեցաւ եւ վիրաւորուած զգացի, երբ կարդացի թէ Եւրոպական Միութիւն մտնելու արտօնութիւն չէ տրուած Հայաստանին, որովհետեւ մենք չենք համապատասխաներ առողջապահական ցուցանիշներուն, այլ խօսքով՝ չենք որակաւորուիր, մինչ մեր դրացի Վրաստանին կը տրուի արտօնութիւն: Ասիկա մեծ ամօթ մը կը նկատեմ ես՝ Երուսաղէմի մէջ քիչ թէ շատ հասարակական երկարամեայ գործունեութիւն ծաւալած անձս:

Հետեւաբար,

ա.- քանի որ մեր երկրին մէջ կը տիրէ թաքուն թշնամին՝ պսակածեւ ժահիրը, առաւել եւս երբ մեզի կը սպառնան ներքին բախումները, արեւելքէն,արեւմուտքէն եւ հիւսիսէն տեղացող ակնյայտ գործողութիւններ, իրաւունք չունինք ազատ թողուլ որ անոնք կատարեն իրենց կործանիչ դերը:

բ.- Երկրին մէջ անմիջապէս հռչակուի **արտակարգ վիճակ**:

գ.- Վարչապետ Փաշինեանը նոր «յեխափոխութիւն» մը պէտք է ընէ եւ անցնի կտրուկ միջոցներու: Այս թշնամիներու դեմ պայքարը մեղմ չի կրնար ըլլալ, մանաւանդ տականքներու դեմ, որոնց պէտք է չէզոքացնել քաղաքականապէս,օրէնքէ դուրս յայտարարէ հակա-յեղափոխական կուսակցութիւնները եւ բոլոր կեղծ (ֆէյք) լուրեր տարածողները՝ տալով իրենց արժանի պատիժը:

Hagop Antreassian  
Ceramic Artist  
P.O.BOX 14176  
Jerusalem 91141

Keghart

Non-partisan Website Devoted to Armenian Affairs, Human Rights  
and Democracy

Tel. +972 2 626 3871

Mobile. +972 (0)54 300 8577

E-Mail. [hagoplibarid@gmail.com](mailto:hagoplibarid@gmail.com)

ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՇԱՏ ԼՈՒՐՁ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ Է

<https://keghart.org/antreassian-pandemic/>

## Comments



**Ruben Hakobyan** – 2020-07-09 01:22:06

Երբե՛ք արդարացուցիչ չեմ գտներ «Ես հաւատացած չեմ» Շատ վատ է, որ հավատացած եք: Այստեղ իրոք հավատքի հարց է: Հավատք ունեցողն իրոք դրան չի հավատա: Գոնե՛ որեւէ հավատ: Ես անձամբ ունեմ հավատ գիտության հանդեպ, եւ որպես այդ հավատի (եւ տրամաբանության) կրող տեսնում այս ամենի հակագիտական, փաստերի հետ կապ չունեցող հանգամանքները, որոնց ետեւում՝ ձեր նշած դեղագործ ավազակների ձեռքն է: Գոնե դուք սփյուռքում ջուր մի լցրեք հայ ժողովրդի թշնամիների ջրադացի վրա: Բավական է, որ դուք՝ սփյուռքը կա, եւ մեր գլխին գլխացավանք է: Գոնե լռեք: Իսկ ավելի լավ է՝ ձեր մեղքերը քավելու համար՝ վերադարձեք Հայրենիք. այստեղից ձեր խոսքն ավելի ճիշտ ուրվագծեր կստանա: Եթե իհարկե հավատք ունենաք: